

ISSN 1829-4987

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ, ԱՍՊԻՐԱՆՏՆԵՐԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱԿԱՆՆԵՐԻ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ 5-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ
Գիտաժողովի կյութեր

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF ECONOMICS AND MANAGEMENT
CURRENT ECONOMIC PROBLEMS
5TH INTERNATIONAL CONFERENCE OF
STUDENTS, POSTGRADUATES AND YOUNG SCIENTISTS
Proceedings

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ ЭКОНОМИКИ И УПРАВЛЕНИЯ
СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ ЭКОНОМИКИ
5-ая МЕЖДУНАРОДНАЯ НАУЧНАЯ КОНФЕРЕНЦИЯ
СТУДЕНТОВ, АСПИРАНТОВ И МОЛОДЫХ УЧЕНЫХ
труды конференции

ԵՊՀ ԵԳՄ – YSU UYS – OMY EGY
ԵՐԵՎԱՆ – YEREVAN – ЕРЕВАН

2017

**Հրատարակվում է ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման
ֆակուլտետի Գիտական խորհրդի երաշխավորությամբ**

**Published by the recommendation of the Academic Council
of the Faculty of Economics and Management of YSU**

**Рекомендовано к печати Ученым советом
факультета Экономики и управления ЕГУ**

Խմբագրական խորհուրդ

տ.գ.դ., պրոֆ. **Յ.Լ. Սարգսյան** (նախագահ), ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ **Գ.Ա. Ղարիբյան**,
տ.գ.դ., պրոֆ. **Ա.Յ.Առաքելյան**, տ.գ.դ., պրոֆ. **Ս.Լ. Ղանթարջյան**, տ.գ.դ., պրոֆ. **Մ.Վ.
Միքայելյան**, տ.գ.դ., պրոֆ. **Թ.Շ. Թորոսյան**, տ.գ.դ. **Յ.Գ. Սևազականյան**, տ.գ.դ., պրոֆ.
Վ.Բ. Բոստանյան, տ.գ.թ., դոց. **Գ.Ս. Գալստյան**, տ.գ.թ., դոց. **Վ.Գ. Խաչատրյան**

Editorial board

Doctor of Economics, Professor **H.L. Sargsyan** (Chairman), Corresponding Member of
National Academy of Sciences of RA **G.A. Gharibyan**, Doctor of Technical Sciences,
Professor **A.H. Arakelyan**, Doctor of Economics, Professor **S.L. Khantaryan**, Doctor of
Economics, Professor **M.V. Mikayelyan**, Doctor of Economics, Professor **T.Sh. Torosyan**,
Doctor of Economics **H.G. Mnatsakanyan**, Doctor of Economics, Professor **V.B.
Bostanjyan**, PhD in Economics, Associate Prof. **G.S. Galstyan**, PhD in Economics,
Associate Prof. **K.G. Khachatryan**

Редакционная коллегия

դ.է.ն., պրոֆ. **Գ.Լ. Սարգսյան** (պրեզիդենտ), անդամ ԳԱԱ ՌԱ **Գ.Ա. Գարիբյան**, դ.տ.ն., պրոֆ.
Ա.Ա. Արաքելյան, դ.է.ն., պրոֆ. **Ս.Լ. Կանտարձյան**, դ.է.ն., պրոֆ. **Մ.Վ. Միքայելյան**, դ.է.ն.,
պրոֆ. **Տ.Շ. Թորոսյան**, դ.է.ն. **Ա.Գ. Մնացականյան**, դ.է.ն., պրոֆ. **Վ.Բ. Բոստանձյան**, դ.է.ն.,
կ.է.ն., ծոց. **Գ.Ս. Գալստյան**, կ.է.ն., ծոց. **Վ.Գ. Խաչատրյան**

Տնտեսագիտության ժամանակակից հիմնահարցեր: Միջազգային 5-րդ
գիտաժողովի կյուրթեր – Եր.: ԵՊՀ ԵԳՄ, 2017 - 288 էջ:

Ժողովածուում ներառված են ուսանողների, ասպիրանտների և երիտա-
սարդ գիտնականների «Տնտեսագիտության ժամանակակից հիմնահարցեր»
խորագիրը կրող միջազգային գիտաժողովի կյուրթերը:

The collection includes proceedings of the international scientific conference
of students, postgraduates and young scientists “Current economic problems”.

В сборнике включены труды международной научной конференции студен-
тов, аспирантов и молодых ученых “Современные проблемы экономики”.

**ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՆՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԳԱՑՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

Սահակյան Նունե

ԵՊՀ, Տնտեսագիտության և կառավարման

Ֆակուլտետ, տ.գ.թ. ասիստենտ

Էլ հասցե՝ nuneconom55@mail.ru

Ժամանակակից աշխարհում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման անհրաժեշտությունն ազգային տնտեսությունների վերակառուցման և զարգացման գլխավոր հրամայականներից մեկն է: Այն հանդիսանում է շուկայական հարաբերությունների արմատավորման և տնտեսական առաջընթացի հիմնական երաշխիքը: ՓՄՁ ոլորտը ներառում է տնտեսության բավականին լայն հատված և ներկայացնում է արտադրական և վերամշակող ձեռնարկություններ, արհեստները, մանրածախ և մեծածախ առևտուրը, ֆերմերային տնտեսությունները, ծառայությունների և սպասարկման ոլորտը և այլն: ՓՄՁ-ն շուկայական տնտեսության զարգացման հիմնական շարժիչ ուժն է: Այն խթանում է մասնավոր սեփականությունը և ձեռնարկատիրական հմտությունները, ճկուն է փոփոխվող շուկայական տնտեսության պայմաններում, օգնում է դիվերսիֆիկացնել տնտեսական գործունեությունը և կարող է էական ներդրում ունենալ միջազգային առևտրի, արտահանման խթանման և, իհարկե, նոր աշխատատեղերի ստեղծման գործում: Արդյունքում ապահովվում է տնտեսության կայուն աճ և հասարակության միջին խավի ձևավորում: Վերջին տարիների ընթացքում բարձր տեխնոլոգիաների շուկայում տեղի ունեցող զարգացումները վկայում են այն մասին, որ այս ոլորտում գործող ՓՄՁ սուբյեկտներն ունեն խոշոր կորպորացիաների հետ համագործակցության և անգամ մրցակցության հզոր ներուժ՝ ստիպելով վերջիններիս վերանայել սեփական կառավարման համակարգը և նորարարությունների ներդրման ուղղությամբ իրականացվող քաղաքականությունը:

ՀՀ ֆինանսների նախարարության տեղեկատվական բազայի տվյալների համաձայն Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում 2014 թվականի ընթացքում գործունեություն են ծավալել 74365 ՓՄՁ սուբյեկտ, որոնցից 68117-ը՝ գերփոքր, 5109-ը՝ փոքր և 1139-ը՝ միջին: Վերոնշյալ տնտեսվարող սուբյեկտների շրջանառության ընդհանուր ծավալը կազմել է 1565934 մլն. դրամ, իսկ վերջիններիս

կողմից մուծված հարկերը՝ 237710 մլն. դրամ: 2015 թվականի ընթացքում գործունեություն են ծավալել 75956 ՓՄՁ սուբյեկտ, որոնցից 69939-ը՝ գերփոքր, 4905-ը՝ փոքր և 1112-ը՝ միջին: Վերոնշյալ տնտեսվարող սուբյեկտների շրջանառության ընդհանուր ծավալը կազմել է 1. 610. 772.1 մլն. դրամ, իսկ վերջիններիս կողմից մուծված հարկերը՝ 275529.5 մլն. դրամ:

Սակայն ժամանակակից պայմաններում, ՀՀ-ում ՓՄՁ գործունեության զարգացման վրա ազդում են մի շարք խնդիրներ:

ՓՄՁ-ների զարգացման առաջին հիմնախնդիրներից է իրավաօրենսդրական անկայուն վիճակը: Օրենսդրական բազային անկայուն վիճակը ստիպում է անընդհատ փոփոխություններ մտցնել փոքր ձեռնարկությունների գործունեության մեջ: Օրինակ՝ հարկերի մասին բոլոր օրենքներում և դրանց կիրառման հրահանգներում մշտապես կատարվում են փոփոխություններ, և ձեռնարկատերերը պետք է մշտապես ինքնուրույն հետևեն դրանց ու գործունեության ցանկացած պահի իրազեկ լինեն կատարված նոր փոփոխություններին: Այսինքն՝ գործարարներն այսօր անհրաժեշտ մակարդակով տեղեկացված չեն գործարարությանն առնչվող իրավաօրենսդրական ակտերի և դրանցում տեղի ունեցած փոփոխությունների վերաբերյալ, և անհրաժեշտ է ակտիվացնել աշխատանքները գործարարների շրջանում օրենքների վերաբերյալ տեղեկացվածության աստիճանի բարձրացման ուղղությամբ: ՀՀ հարկային օրենսդրության համաձայն ՓՄՁ սուբյեկտները բաժանվում են երկու մասի՝ շրջանառության հարկի դաշտում, որոնք ունեն մինչև 58,35 մլն ՀՀ դրամ տարեկան շրջանառություն և ընդհանուր հարկման դաշտում գործող հարկ վճարողների:

ՓՄՁ-ների համար հարկային համակարգի բարձր ծախսերի և խոչընդոտների հիմնական պատճառ են հարկային օրենսդրության հաճախակի փոփոխությունները, հարկային համակարգի ոչ ամբողջականությունը և համակարգվածությունը, հարկային վարչարարության տարբեր ձևերի առկայությունը, հարկային օրենսդրության ոչ պարզությունը, կարճ և ոչ ճկուն հարկային վճարումների վերջաժամկետները, հարկային խորհրդատվության բարձր ծախսերը:

Իրավական բարենպաստ դաշտի ձևավորումը դանդաղ, բայց կայուն հիմքերի վրա է ՀՀ-ում: Դրական միտումներն ավելի տեսանելի են դարձել վերջին տարիներին: Սա հիմնավորվում է նաև “Doing Business”-ի հաշվետվություններով: Վերոնշյալ հաշվետվությունների ցուցանիշների հիման վրա կատարած գնահատման արդյունքում

2017թ.-ի դրությամբ Հայաստանը Ձեռնարկատիրական գործունեության վարման ազատության ցուցանիշով զբաղեցնում է 38-րդ տեղը 190 երկրների շարքում, ընդ որում 2017թ.-ին Հայաստանը 5 կետով առաջընթաց է գրանցել նախորդ տարվա՝ 43-րդ տեղի համեմատ:

Սակայն այսքանով պետք չէ սահմանափակվել, քանի որ աշխարհի տնտեսությունները մրցակցում են նաև “Doing Business”-ի վարկանիշային աղյուսակում իրենց դիրքերը բարելավելու համար, իսկ դա նկատելի է նաև նրանով, որ երբեմն, բարձր վարկանիշային տեղեր ունենալով, հետընթաց ենք ապրում, այսինքն՝ պետք է բարեփոխումները լինեն շարունակական՝ թույլ չտալու համար դիրքային թուլացումներ: Իհարկե, ցանկացած ցուցանիշով ապահոված առաջընթացը հնարավորություն կարող է տալ ուշադրությունը սևեռել այլ ավելի ցածր վարկանիշով խնդիրների վրա, սակայն այստեղ ևս պետք է տարբերակված մոտեցում կիրառել և հաշվի առնել գործարարության վարման համար ցուցանիշների 11 հիմնական խումբ, դասական գել ըստ առաջնահերթությունների և սկսել կարգավորել դրանք:

ՓՄՁ զարգացման կարևոր նախադրյալ է ֆինանսական՝ մասնավորապես փոխառու, միջոցների մատչելիության ապահովումը: Բանկերը խուսափում են ՓՄՁ վարկավորումից երաշխիքների բացակայության պատճառով: Սակայն գործարար ոլորտի վարկավորումը մեծ նշանակություն ունի տնտեսության զարգացման համար: Բանկերը փոխառուների այս խումբը համարում են համեմատաբար բարձր ռիսկային, անարդյունավետ և տրամադրում են հիմնականում բարձր տոկոսադրույթներով կարճաժամկետ վարկեր՝ անպայման գրավի առկայությամբ: Այդ է պատճառը, որ ՓՄՁ վարկավորումը կատարվում է առավելապես միջազգային ծրագրերի միջոցներից: Վարկեր ստանալու բարդությունը և երաշխիքային ու գրավային բարձր պահանջները վարկավորման գործընթացն ուղղակի դարձնում են անհնարին հատկապես նորաստեղծ, գերփոքր ու փոքր կազմակերպությունների համար:

ՓՄՁ աջակցող ենթակառուցվածքների մեջ ՀՀ պետական աջակցությունն իրականացնել լիազորված է ՓՄՁ ՉԱԿ-ը: Դուրս են մնացել մարզային ԱԱՊ-ները (առևտրաարդյունաբերական պալատ), բիզնես ասոցիացիաները և աջակից այլ կազմակերպությունները:

Մեր կարծիքով, ՓՄՁ-ների զարգացման հիմնախնդիրներն են նաև արտարժույթի փոխարժեքի տատանումներն, Էլեկտրաէներգիայի, գազի և ջրի բարձր սակագները, ՓՄՁ-ով զբաղվել ցանկացողների

անպատրաստվածությունը, փորձի պակասը, սեփականության հիմնահարցերը, կադրային հիմնահարցերը, սեփական միջոցների անբավարարությունը, վարձակալության դժվարությունները, տնտեսական կապերի խզումը, ինֆորմացիայի անբավարարությունը, նյութական բազայի անբավարարությունը, հաճախորդների, սպառողների գտնելը, հումքի, նյութերի բարձր գները, արտադրության անշահավետությունն, արտոնությունների բացակայությունը, ներդրումների անշահավետությունը, մրցակցությունը, շուկայի անկատարությունը, արևմտյան գործընկերների անվստահությունը, բացասական վերաբերմունքը ձեռնարկատերերի նկատմամբ, արտաքին շուկաներ դուրս գալու և սեփական արտադրանքը ներկայացնելու բարդությունները:

Հայաստանի տնտեսության համար գերակա ուղղություններ են համարվում բարձր տեխնոլոգիական, նորարարական ներդրումներով, տեղեկատվական տեխնոլոգիաներ օգտագործող ձեռնարկությունները: Սակայն առանձին փոքր ձեռնարկությունների համար այդպիսի գործունեության ծավալումը գրեթե անմատչելի է: Ձեռնարկության զարգացման, այս հույժ կարևոր հնարավորություններից օգտվելու համար անհրաժեշտ է ստեղծել բիզնես ինկուբատորներ, տեխնոպարկեր, արդյունաբերական գոտիներ, վենչուրային հիմնադրամներ: Հիմնականում բիզնես ինկուբատորներն իրենցից ներկայացնում են տվյալ ոլորտում արդյունավետ գործող և ըստ ժամանակի մեծ փորձ ունեցող ընկերություններին, որոնք կարող են նոր ստեղծվող ՓՄՁ-ներին տրամադրել համատեղ օգտագործման միջոցով կարևորագույն արտադրական գործոններ և դրանց բաղադրիչներ (մեքենասարքավորումներ, հումք, նյութեր, մարկետինգային, կառավարչական և խորհրդատվական ծառայություններ): Բիզնես ինկուբատորները սովորաբար ստեղծվում և աջակցվում են կառավարության կողմից և ֆինանսավորվում են դրամաշնորհների կամ ցածր տոկոսադրույքներով վարկերի միջոցով: Կառավարության կողմից օգնությունը հաճախ լինում է չօգտագործվող տարածքներն անվճար տրամադրելու ձևով, որը տարածաշրջանի համար գրավիչ և իրագործելի է: Ինկուբատորները մեծ նշանակություն ունեն մարզային զարգացման համար:

ՀՀ-ում բիզնես ինկուբատորների ստեղծման հարցում պետք է հիմնվել զարգացած երկրների փորձի վրա: Վերջինիս նպատակն է նոր աշխատատեղերի ստեղծումը, փոքր բիզնեսի հիմքի վրա գործարար կյանքի աշխուժացումը: Հարկ է նշել, որ ձեռնարկատիրության աջակցությունը, որքան որ պետական իշխանության մարմինների

հոգաճության խնդիր է, այնքան էլ պետք է լինի մարզային և համայնքային իշխանությունների հոգաճության խնդիր:

ՓՄՁ տեխնոլոգիական և նորարարական աջակցության ձևերից է տեխնոպարկը: Այն գիտական կենտրոնի շուրջ համախմբված նորաստեղծ ձեռնարկությունների համախումբ է, որն առաջարկում է ժամանակակից բարձրորակ խորհրդատվություն և տեղեկատվություն՝ ուղղված ձեռնարկությունների տեխնոլոգիական զարգացման, արտադրանքի որակի կատարելագործման, ինչպես նաև տրամադրում է իրացման շուկաների ուսումնասիրություններ իրականացնելու լայն հնարավորություն: Հայաստանում ձեռնարկատիրության զարգացման ներկա փուլում առանձնակի կարևորվում է տեղական ՓՄՁ սուբյեկտների արտահանման ներուժի զարգացումը և արտաքին շուկաներ մուտք գործելու հնարավորությունների ընդլայնում, ինչը կստեղծի լրացուցիչ հնարավորություններ վերջիններիս համար՝ ապահովելով նշանակալի տնտեսական արդյունք:

Իհարկե, ՓՄՁ բոլոր խնդիրների համար չկա մեկ միասնական լուծում: Շատ երկրներ հասել են հաջողության ՓՄՁ զարգացման ապակենտրոնացված քաղաքականության շնորհիվ, մյուսները՝ հատկապես փոքր երկրները, կարողացել են խթանել ՓՄՁ-ների մրցունակությունն ավելի կենտրոնացված մոտեցման միջոցով:

Այս ամենից ելնելով՝ փորձենք համառոտ ներկայացնել այն հնարավոր լուծման ուղենիշերը, որոնք կարող են ՓՄՁ-ներին հնարավորություն տալ առավել կենսունակ լինելու ճգնաժամերի պայմաններում:

Հարկավոր է մշակել հնարավոր մոտեցումներ ՓՄՁ-ների տեղեկատվական հասանելիությունն առավել բարձր մակարդակի հասցնելու համար, ինչպես նաև զարգացնել Կառավարություն և ՓՄՁ-ներ փոխհարաբերությունների մակարդակը:

Հաջորդ քայլով հարկավոր է հզորացնել ՓՄՁ-ների ունակությունները, որոնք պետք է արտահայտվեն կառավարչական հմտությունների հզորացման, ֆինանսական կառավարման ոլորտում գիտելիքների ընդլայնման արդյունքում և այլն:

Բանկեր և ՓՄՁ-ներ կապի ուժեղացում և վարկավորման արտոնյալ պայմանների ստեղծում, ինչպես նաև ցածր տոկոսադրույթներով վարկերի տրամադրում, երաշխիքների արդյունավետ գործող համակարգի ներդրում: Բավականին լուրջ նախաձեռնություն կարող է լինել նաև ՓՄՁ սուբյեկտներին տրամադրվող վարկերի տոկոսադրույթի մասնակի սուբսիդավորման

ծրագրի կյանքի կոչումը, քանի որ յուրաքանչյուր սուբսիդավորված տոկոս առավել մեծ է դարձնում հավանականությունը, որ ՓՄՁ սուբյեկտները կդիմանան մրցակցությանը, ինչպես նաև առավել կարճ ժամանակահատվածում կմոտենան անվնասաբերության կետին:

ՓՄՁ-ի սուբյեկտների կադրային ներուժի ձևավորման և զարգացման հարցերում ևս անհրաժեշտ է մշակել ու իրականացնել պետական ծրագրեր, քանի որ գիտելիքահենք տնտեսության ձևավորման համար անհրաժեշտ են նորարարական մտածելակերպով օժտված և զարգացած ձեռնարկատերեր, որոնք իրենց անձնակազմի հետ մեկտեղ պետք է լինեն մրցունակ և կարողանան դիմակայել սուր մրցակցային պայթարում:

Հայաստանի ՓՄՁ սուբյեկտներին աջակցության համապատասխան ենթակառուցվածքների ձևավորումը պետք է դիտարկել որպես առաջնային խնդիր, քանի որ առանց հստակ մշակված մեխանիզմների այդ ենթակառուցվածքը միշտ էլ գործելու է թերի, մյուս կողմից ՓՄՁ-ներն, աջակցություն չզգալով, ունենալու են զարգացման դժվարություններ. փնտրելու են առավել նպաստավոր տնտեսական պայմաններ և գործարար միջավայր իրենց գործունեությունը շարունակելու համար: Այս առումով մենք ունենք լուրջ մրցակից մեր կողքին՝ ի դեմս Վրաստանի, որը կարող է լուրջ խնդիրներ ստեղծել ՀՀ-ից կապիտալի արտահոսքի և ակտիվ ձեռնարկատիրական մասսայի դեպի Վրաստան տեղափոխվելու առումով: ՓՄՁ-ների զարգացման համար կարևոր է նաև տեղական արտադրանքի խթանումը և տեղական ապրանքանիշերի ձևավորումը, այստեղ անգամ ՓՄՁ-ների խմբեր, միասնական ապրանքանիշով հանդես գալու գաղափարներ է հարկավոր կյանքի կոչել, այսինքն՝ կորորդինացնել մինևույն տեսակի արտադրանք թողարկող ձեռնարկությունների միավորման գործընթացը: ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի արտահանմանն աջակցության ծրագրերը ևս անհրաժեշտ է վերանայել, ինչպես նաև ուսումնասիրելով արտաքին շուկաներն՝ ուղղորդել, թե որտեղ կարող են բարենպաստ պայմաններում հայտնվել ՀՀ ՓՄՁ-ները: Նմանատիպ խորհրդատվական ծառայությունները կարող են իսկապես բարձրացնել ՓՄՁ ՉԱԿ-ի դերը, ինչպես նաև ՓՄՁ-ների կողմից այդ կառույցի հանդեպ վստահության մակարդակը:

Վերոնշյալ բոլոր հարցերը լուրջ օրենսդրական նախաձեռնությունների հիմք կարող են հանդիսանալ, որպեսզի ոչ միայն ծրագրային, այլ նաև օրենսդրական մակարդակով կազմակերպվի ՓՄՁ-ների աջակցությունն ու հետագա զարգացումը:

Իհարկե, նշված լուծումները կյանքի կոչվելու պարագայում կարող են առաջխաղացման հիմքեր ստեղծել ՓՄՁ-ների գործունեության համար, սակայն դժվարություններն այնքան շատ են, որ ստիպում են մի շարք ձեռնարկությունների անգամ պետական աջակցության և արտոնյալ պայմանների դեպքում ևս դուրս գալ շուկայից, քանի որ մենք գործ ունենք գլոբալ մրցակցային շուկայի հետ, իսկ այստեղ մրցակցության պայմանները թելադրում են առավել ուժեղ ձեռնարկությունները: Եվ որպեսզի ՓՄՁ-ները կարողանան դիմակայել ճգնաժամերին և մրցակիցներին պետք է կարողանան դրսևորել ճգնաժամերի դեմ ճկունություն, իսկ մրցակիցների հանդեպ ունենան առավելություն:

Սահակյան Նունե
**ՓՈՔԻ և ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿՎԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆՂԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

Բանալի բառեր - *ձեռնարկատիրություն, վարկավորում, հարկային օրենսդրություն, զարգացման հիմնախնդիրներ:*

Թեմայի արդիականությունը կայանում է նրանում, որ ՓՄՁ-ն ունենալով մի շարք առանձնահատկություններ, (գտագործում են տեղական ռեսուրսները, ավելի քիչ կախվածություն ունեն ներմուծումից, խոշոր ներդրումներ չեն պահանջում, կարող են աշխատատեղեր ապահովել համեմատաբար կարճ ժամանակահատվածում և այլն) նպաստում է ազգային տնտեսության մրցունակության բարձրացմանը: Տվյալ զեկույցում ներկայացված են մի շարք հիմնախնդիրներ, որոնք բացասական ազդեցություն ունեն ՀՀ ՓՄՁ զարգացման վրա:

Sahakyan Nune
**THE MAIN PROBLEMS OF THE SMALL AND MEDIUM ENTERPRISE
DEVELOPMENT**

Key words – *business, loans, tax legislation, development issues.*

The relevance of the topic is that SMEs having a number of features / uses local resources, are less dependent on imports, do not require large investments, can provide work within a relatively short period of time, and others / contributes to the enhancement of the national economy. This report contains a number of problems that have a negative impact on the development of small and medium business in Armenia.

Саакян Нуне
**ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ МАЛОГО И СРЕДНЕГО
ПРЕДПРИНИМАТЕЛЬСТВА В РА**

***Ключевые слова** - бизнес, кредиты, налоговое законодательство, вопросы развития.*

Актуальность темы заключается в том, что МСП имея ряд особенностей /использует локальные ресурсы, в меньшей степени зависят от импорта, не требуют больших инвестиций, может обеспечить работу в течение относительно короткого периода времени и другие/ способствует повышению конкурентоспособности национальной экономики. В данном докладе содержится ряд проблем, которые оказывают негативное влияние на развитие малого и среднего бизнеса в РА.